# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2014թվականի N 14

ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼՈՎ <<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու հերթական թիվ 6 նիստի հետևյալ օրակարգը՝

1.ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2.,,ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,,՝03.12.2013Թ. ԹԻՎ 26 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

3..ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ, ԲԱՑԻ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ, ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2014թվականի N 15

## ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Ելնելով անհրաժեշտությունից համայնքի 2014թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 09.06.01.51 գործառնական դասակարգման 5113 հոդվածից 3.400.000դրամ պակասեցնել, ավելացնելով 04.05.01.59 գործառնական դասակարգման 5113 հոդվածին, գյուղի կենտրոնական փողացի ասֆալտապատման աշխատանքների կատարման համար.

2. 2014թ.հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման պատճառով՝ 09.01.01.51 գործառնական դասակարգման 4111 հոդվածին՝ աշխատավարձի տարբերությունը վճարելու համար.

3. առաջին դասարանցիներին նվերներ տալու համար 11.01.02.51 գործառնական դասակարգման 4891 հոդվածից 300000դրամ հատկացնել 06.02.04.51 գործառնական դասակարգման 4269 հոդվածին

4. 11.01.02.51 գործառնական դասակարգման 4891 հոդվածից 200000դրամ պակասեցնել ավելացնելով 4729 հոդվածին՝ անապահով ընտանիքներին օգնություն տալու համար։

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԻԿ ԱԼԻԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2014թվականի N 16-Ն

### ,,ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,,՝03.12.2013Թ. ԹԻՎ 26-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և ,,Ամսական նվազագույն աշխատավարձի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Համայնքի ավագանու 03.12.2013թ. թիվ 26-Ն որոշման թիվ 1 և թիվ 3 հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները՝

Հավելված 1- ի համայնքային ծառայության պաշտոնների 4-րդ տողի՝

Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/3.2-1/ 66200դրամ դրույքաչափի փոխարեն գրել 70822դրամ.

5-րդ տողի՝

Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ/3.3-1/ - 66200դրամ դրույքաչափի փոխարեն գրել 70722դրամ:

Հավելված 3-ում՝

Գեղմասվար - 66200դրամ դրույքաչափի փոխարեն գրել 70722դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԻԿ ՄԱՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2014թվականի N 17

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ, ԲԱՑԻ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ` ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ, ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1910-Ն որոշման, թիվ 7 հավելվածով հաստատված ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար տրամադրվող վճարովի հողատարածքի հատկացման կարգի 8-րդ և 9-րդ կետերի համաձայն, համայնքներում ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անվճար տրամադրվող չափից ավել վճարովի հիմունքներով տրամադրվող հողատարածքների արժեքների որոշում` ըստ տվյալ գոտու համար սահմանված տարածագնահատման գոտիականության գործակիցների, ինչպես նաև հատկացված հողատարածքի արժեքի վճարում համայնքի բյուջե և ստացված միջոցների օգտագործում գերեզմանատների պահպանման ու շահագործման համար` համայնքի ավագանին որոշում է.

1.Բարձրաշեն համայնքում ընտանեկան գերեզմանոցի կազմակերպման համար, բացի օրենքով նախատեսված անվճար հիմունքներով տրամադրվող հողատարածքից, վճարովի հիմունքներով տրամադրվող հողատարածքի յուրաքանչյուր 1քմ-ի համար սահմանել 800դրամ վճար:

2.Այլ վայրերից գյուղի գերեզմանոցներում հողարկավորության դեպքում, 12քմ-ի համար սահմանել 50000դրամ վճար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ

2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՈՒՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ